ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«08» 01 2016թ. N: 1 ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԻ ՇԱՐՔ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՈՒԴԻՏ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով <<Ներքին աուդիտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, 5-րդ հոդվածի երկրորդ մասով.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. 2016 թվականի ներքին աուդիտի հաստատված ծրագրի շրջանակներում, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի թվով 5՝ <<Արթիկի թիվ 5 հիմնական դպրոց>>, <<Արթիկի թիվ 2 երեկոյան դպրոց>>, <<Ախուրյանի թիվ 1 հիմնական դպրոց>>, <<Ախուրյանի թիվ 2 հիմնական դպրոց>> և <<Վահրամաբերդի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպություններում անցկացնել ֆինանսական աուդիտ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետներ Բարսեղ Քոչարյանի, Արտակ Հայրապետյանի և Մուշեղ Մուրադյանի կողմից:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ Մ. Բզնունուն՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներին մասնակից դարձնել ֆինանսական աուդիտի անցկացվող պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրեներին և հաշվապահներին:

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ Մ. Բզնունուն՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքները իրականացնել 20 աշխատանքային օրվա ընթացքում:
4. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ Մ. Բզնունուն:
5. Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Ֆ. ՑՈԼԱԿՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է